Արձանագրություն N 3

<<ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով ԲՄ ընթացակարգով հայտարարված Ծաղկաձոր համայնքի կարիքների համար <<ԾՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի բակային տարածքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք.Ծաղկաձոր 13 սեպտեմբեր 2019թ.

ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի
Նախագահ՝ Ն.Խաչատրյան
Անդամներ՝ Լ.Սարգսյան
Ն.Սիմոնյան
Ա.Մեսրոպյան
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 26-րդ կետի 1-ին մասը՝ հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության պատճառով /գտնվում է հերթական արձակուրդում/ նիստը նախագահում է հանձնաժողովի անդամ Ն.Խաչատրյանը:

1. <<ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը վերագնահատելու մասին

(Ն.Խաչատրյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ՝

<<ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատելիս տեղի է ունեցել վրիպակ, 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված <<Խաչիկ և Լիանա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կրկին ուսումնասիրելուց հետո պարզ դարձավ, որ առկա է անհամապատասխանություն. օրենքով սահմանված կարգով՝ բանկային երաշխիքը՝ Հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր, մինչդեռ <<Խաչիկ և Լիանա>> ՍՊԸ-ի կողմից 10/09/2019թ. ներկայացված բանկային երաշխիքի ժամկետը սահմանված է 08/11/2019թ. :

1.2 Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Գնահատող հանձնաժողովի կողմից <<Խաչիկ և Լիանա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
<<Խաչիկ և Լիանա>> ՍՊԸ	Անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

2. <<ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Ն.Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ <<ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ -ն՝ որպես հրավերի պահանջներին բավարարող մասնակից, 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել՝ <<ԱԳԱԹ-777>> ՍՊԸ -ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Ն.Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ *13.09.2019թ.* հարցում կատարել ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հայտերի բացման նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարկելու օրվանից հաշված 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման համար :

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն.Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված հարցման պատասխանի ստացմանը հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Հանձնաժողովի նիստին ներկա անդամի անունը,ազգանունը	Ստորագրությունը
Նախագահ՝ Ն.Խաչատրյան	
Անդամներ՝ Ա.Մեսրոպյան	
Ն.Սիմոնյան	
Լ.Սարգսյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	